

նեց, և բոլորանուէր աշխատեցաւ օգտակար ըլլալու Հայ Եկեղեցւոյ, և ապրեցաւ անաղարատ ու մաքուր կեանքով. կատարելապէս ունեցաւ արդարութեան շնաշխարհիկ պարծանքը: Արիւթեան ոյժը զգաց միշտ իր ներսը: Աւելիք ընթացքը մաքուր նպատակի հետ կ'կազմեն մարդուն ներքին զօրութիւնը գերադասնց արտաքին ամէն զօրութիւններէ: Խոհեմութիւնն ալ, որ դիտէ ներգաշնակ համաձայնութեան մէջ պահել զանազան պարտուց կոտարումը, կատարեալ էր իր վրայ: Հաւատարիմ ծառայող մը պետութեան՝ գիտողութեանց տեղի չտուաւ և հաւատարիմ ծառայող մը իր Եկեղեցւոյն և հասարակութեան՝ ընաւ շմեղագրուեցաւ պետութեան կողմէն: Այսպէս միւրոյն կարապետի իմաստուն կատարելութեան և կատարեալ իմաստութեան եօթնասիւն տաճարը հաստատ և անօտտան կերպով հիմնուեցաւ իր հաւատքին և յուսոյն և սիրոյն և բարեխառնութեան և արդարութեան և արիւթեան և խոհեմութեան առաքինական ձիրքերուն վրայ:

Յրհնեալ ըլլայ իր յիշատակը:

Աղօթենք՝ որ Աստուած միշտ մեր մէջէն անպակաս ընէ այսպիսի անշահախնդիր, անըտօիր, կարող, գործօն և հանրօգուտ անձնաւորութիւններ:

Մաղթենք հանգիստ իր հոգւոյն. և նա՝ որ ուրիշ բարիք ընողներուն աւատապէս կ'ըրաշխէ իր արդութիւնները, հաշտակամը նայի ամէնուն ալ տկարութեանց վրայ, և իր յաւիտենական Ըարութեամբ վարձատրէ մեր հանդուցելոյն հոգին»:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Քիւղանդիտնի մէջ կարգում ենք.

Մարաշ Ալքըր տաղ լեւոնց ոտորոտի և մի քանի բլուրների վրայ շինուած գեղեցիկ դիրքով դարդարուն քաղաք է: Հիւսիսարեւելեան կողմից բղխում է Քառասուն աչք կոչուած աղբիւրների պաղուկ ջուրը:

Մարաշ ունի վեց եկեղեցի 10 քահանաներով, եկեղեցիների մէջ ամենից շէնն և բազմաթողովուրդն է յանուն Քառասուն մանկանց կառուցուածք, որ ունի նաև նորաշէն փառաւոր

ոսկեզօծ խաչկալ մը: Մնացեալ եկեղեցիներէն էր երբ միջակ մեծութեամբ, ցածկէկ, բայց ամբակուռ շինուած ու կաղմուածք ունին. իսկ երկուսը տասնեակ տարիներէ ի վեր կիսաշէն ու կիսափուլ դրութեան մէջ են. թէ և վերջիններէս վերաշինութեան մասին մի քանի անգամ ղեմումներ են եղած: սակայն դժբախտաբար ց'արդ մնացել են ապարդիւն: Մարաշ մի տարւոյ ի վեր ունեցել է նաև իւր կիրականօրեայ լուսարանը, որ ց'արդ կյարատեւէ. շաբաթական քարոզում են երկու հոգի՝ մէկը եկեղեցական, իսկ միւսն—աշխարհական: Մարաշի եկեղեցիներէ մէջ մինչև մօտ ժամանակներս աշխարհականներին երբեմն թոյլ էր տրուում խօսել, բայց մի քանի շահախնդիրներ առիթից օգուտ քաղել ուղեցին՝ լոկ իրենց անձնական կրօնական ոխալ գաղափարները սերմանելու և տարածելու ժողովրդի մէջ. իրենց քաջալեր ունեցան քահանաներից մինին և հետեանքն այն եղաւ, որ Այնթապի Փիլիպոսեանի նման աղանդաւորներ առաջ բերաւ. բարեկարգութեան համար շատ աշխատեց և մինչև իսկ, եթէ չենք սխալուում, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին ղեմումներ եղան: Կը յուսանք, որ այսուհետեւ քաղաքիս Տ. Փառէն վարդապետի հեռատեսութեամբ յօգուտ եկեղեցու օգտակար կարգադրութիւն կլինի, որով արտաքուստ հայ և չայ եկեղեցու զաւակ կոչուող ազգայինները կըթողնեն իրենց ներքին բողոքականութիւնը, որ աւելի վնասակար է, որ կը մատնէ իրենց ամեն մէկ շարժ ու ձևը, նիստ ու կացը և խօսեցակերպը:

— Վերջին մեղադրանքը խիստ մթին է, անորոշ և ընդհանուր բառերի մէջ պարփակուած: Յանկալի է, որ իւրաքանչիւր մեղադրանք և մանաւանդ կրօնականը հիմնուած լինի խիստ որոշ և անհրեքելի փաստերի վրայ և այնտեղ, ուր խօսքը կըօնական համոզմունքի մասին է, խօսելու կերպով, շարժ ու ձևով և նիստ ու կացով մարդկանց չը մեղադրեն:

Վերջերս փոթորկից վնասուած Պեշիկթաշի եկեղեցին և դպրոցը քննելով, ճարտարապետները գտել են, որ նորոգութեան համար հարկաւոր է 360 ոսկի: Կաղմած տեղեկագիրը մատուցուել է Նպաստամատոյց Յանձնաժողովին, որի պաշտօնն է արկածեալներին օգնելը:

Ազգային Հիւանդանոցի նոր թևի շինութիւնը պէտք է կատարեն այն երեք անձինք, որոնք իրենց վրայ են վերցրել շինու-

Թեան ծախքը և իրենց կողմից ճարտարապետներ հրաւիրելը: Կատարելով շինութեան գործը ընդունուած և հաստատուած յատակածով, պէտք է յանձնեն Հոգաբարձութեան: Նոր թիւք ըաղկացած է երեք մասից, իւրաքանչիւր մասի շինութիւնը վերցրել է մի անձն. շինողների անունը պէտք է գրուի իրենց շինած մասի վրայ, ինչպէս և եկեղեցի շինող չորրորդ անձի անունը պէտք է գրուի նոր եկեղեցու ճակատին:

Իգմիրի առաջնորդ Տ. Եղիշէ Դուրեան եպիսկոպոսը ուղարկուել է Արմաշ չորս սարկաւազների վարդապետական ձեռնագրութիւնը կատարելու: Այդ սարկաւազների կնքահայրուց թիւն ստանձնել են այրի տիկին Յուլիանէ Մ. Պալեօղեան, տիկին Յուլիանէ Յ. Եռստեֆ, տիկին Մադլէն Ղ. Եսայեան և այլք՝ տիկին Ռօզինա Պ. Պաքըրճեան, որոնք յանձն են առել նորընծայ արեղաներին վճարել տառնական ոսկի հանդերձագին: Ասում են, որ Դուրեանը մտազբել է նորընծայ վարդապետներից մինին նշանակել Այտընի Թեմերի շրջիկ քարոյիչ, երկրորդին Գառապայի Թեմերի, երրորդին Իգմիրի ազգ. երկսեռ վարժարանների կրօնագիտութեան ուսուցիչ, իսկ չորրորդը պէտք է նշանակուի առաջնորդական գործոց վրայ:

Եթովպիոյ հոգևոր հովիւ Տ. Մկրտիչ քահանայ Չըլդատեանը հասել է Շուշու, որ դառնում է մայրաքաղաքի մօտ և դիմաւորուել է Մենելիք կայսեր ներկայացուցչի, ազգայինների և յոյն երևելիների կողմից: Կայսեր ներկայացուցիչը ս. Խաչն համբուրելուց յետոյ՝ ողջունել և բարի գալուստ է մաղթել քահանային, որը Թափօրով ուղևորուել է քաղաք ղինուորները ուղեկցութեամբ: Մենելիք կայսեր հրամանով Չըլդատեան, քահանայի ըստ ծախսերը պէտք է հոգացուին կայսերական գանձարանից: Տէր Մկրտիչ քահանան կայսրին պէտք է ներկայացնի ս. Միւռոն, մի մասունք և ֆրիստոսի գերեզմանը, որ ամբողջովին սաղապից է քանդակուած: Երբ Մենելիք կայսեր ոսկերչապետ պ. Բաղդասարեանը իմացրել է նորին Վհհափառութեան քահանայի Շուշու հասնելը, Մենելիք կայսրը հրամայել է յատուկ կահաւորուած շէնք յատկացնել քահանայի բնակութեան համար, քանի որ նա Ատիս Ապապա կը մնայ:

Յունիսի 15 ին կատարուել է Ատարազարի Հայուհեաց վարժարանի տարեվերջի հանդէսը: Աւարտողներին քարոզ է խօսել ուսուցչապետ Յ. Ճէզիեան Աւետարանական հայոց եկեղեցու մէջ: Նըջանաւարտ օրիորդներից աւարտական ճառեր են կարդացել հետեւեալ նիւթերի մասին.

Օր. Հայկանոյշ Մ. Հելվիսճեան—«Անցեալն ու ներկան».
 օր. Ագապի Թադեան՝ «Թէ ով կրնայ յաջող ըլլալ կեանքի պայքարի մէջ».
 գրուած անգլիերէն: Օր. Լուսի Թ. Ղուկասեան՝—«Լռութեան լեզուն».
 օր. Արեւեակ Յակոբեան—«Մովի հրաշալիքները».
 գրուած ֆրանսերէն: Օր. Նուրիյա Տ. Վարժապետեան—«Աղջկանց մտաւորական կրթութիւնը».
 օր. Մարկոս Անդրէասեան՝—«Զգողութեան օրէնքը կեանքի մէջ».
 գրուած անգլիերէն: Օր. Եւնիկէ Կ. Մալխասեան՝—«Ներսէս Ծնորդալի».
 օր. Զարուհի Ն. Պալիկեան՝—«Նէլլէն քէլլէր».
 գրուած անգլիերէն: Օր. Արմանոյշ Մ. Վարժապետեան՝—«Օսմանեան լեզու և գրականութիւն».
 գրուած թուերէն: Օրիորդ Բարուհի Թամրադեան՝—«Դէպի ապագան»:
 ճառերի միջոցին երգուել են երգեր, արտասանուել են ուղերձներ և աղօթքով լիակուել է հանդէսը: Այս տարուայ ըստ շրջանաւարանները հայ են:

Վանից Պօլսոյ թերթերին հաղորդում են, որ չը նայած դրամի չգոյութեան, ժողովուրդը նեղում է հացի և ուրիշ աննպէղէանների աղութիւնից: Աւրիշ տարիների թանկութեան ժամանակ գոնէ պարսից սահմանից են ցորեն հասցրել, իսկ այս տարի պարսից սահմանի վրայ նոյնպիսի թանկութիւն կայ, ինչպէս Վանայ չըջակայրում է: Դրութիւնն այնքան ծանր է, որ դրամ ունեցողը ցորեն չի կարողանում գտնել: Առաջնորդարանը գիմել է Պօլիս և օգնականութիւն է լսողքել աղքատ ժողովրդին սովի ճիւղաններից աղատելու համար:

Անօրինակ մահացուցակ.

Բիւզանդիոնի մէջ կարդում ենք Տարէնտէից դրած հետեւեալ նամակը.

Ապրիլի սկզբներին ի Տէր հանգեաւ Տ. Աբրահամ Եպիսկոպոս Մամիկոնեան, կաթողիկոսական փոխանորդ Կիւրինի և Տարէնտէի, ամուլ պաշտօնավարութենէ ետք, որ մի քիչ էլ անպատուարներ եղաւ՝ առանց չափազանցութեան: Սեպտեմ-

բերել սկզբներն այցելեց Տարէնտէ, ուր մնաց իւր ամիս մը և ուր կրթական և եկեղեցական գործոց մէջ ոչինչ գործեց նշանակութեան արժանի: Ասոնք քահանայի և նորելուի թաղ, խորհրդի ձեռն գործիք դարձաւ, կրթական և եկեղեցական գործոց նկատմամբ նրանց խորհուրդների արձագանքն եղաւ, նրանց տկար կրքերը շոյեց, փայփայեց. անոնց մեքենայութեանց մէկ ճշգրիտ հայելին հանդիսացաւ: Այդքան հասուն տարիքի մէջ ինչ կրթանքէր, եկեղեցաշէն գործեր կ'անկալուէր իրմէ և ինքն ինչ ախուր գործերի հանդիսատես դարձրեց ժողովրդին: Ա. եկեղեցու բեմից անէծքի, սպառնալիքի կարկուտներ ցանեց այս և այն անձերի դէմ: Միայն երեւակայական թշնամիներ նշմարեց այս ու այնտեղ և այնպիսի բառերով ու պարբերութիւններով լղրճեց իւր քարոզները, որ միայն միջնադարեան հաւատաքննիչի կը վայելէին, քան թէ հայ եկեղեցական մի բարձր պաշտօնէի: Ատելութիւն, մախանք որոտաց անոնց դէմ, որոնք Ասոնք քահանայի հակակրանքին արժանանալու դժբաղդութիւն էին ունեցել, կամ նրան և նորն թաղ. խորհրդի քմահաճոյքին հետևելու յօժարամտութիւն չէին ունեցել և այս ամենը, ամաչում ենք ասել, մի քանի ոսկիների պատճառով, որոց կարօտը միայն ունէր հանդուցեալ սրբազանը, քան իւր համայնքին բարօրութեան ու զարգացման սուրբ խանդն ու կորովը: Դառնացած, իւր վերջին շունչը պէտք է որ աւանդած լինի ամենադէտ Արարարի ձեռքը, որի անհուն գթութիւնը կը խնդրենք հանդուցեալ սրբազանի մարդկօրէն գործած սխալանաց համար և կը մաղթենք, որ դէթ այսուհետեւ Ալուին և Տարէնտէ բախտ ունենան աւելի կարող և աւելի պարտաճանաչ ու շրջահայեաց կաթ. փոխանորդի հովուութիւնը վայելելու»: ??

Սօսել այսպէս մի մեռած առաջնորդի մասին, երբ սա պատասխանել չի կարող, մեղադրել սրան, որ լսել և հետևել է ժողովրդի ընտրեալների խորհրդին, գիւտ անել, որ նա դառնացած պէտք է լինի և գրել այս տեսակ անհեթեթութիւններ մի ընտրական սկզբունքով պաշտօնի հրաւիրուած առաջնորդի մասին, որին ժողովուրդը կարող էր ուզած ժամանակին փոխել, կարծում ենք, պատիւ չի բերում ոչ մի թղթակցի և զարմանում ենք, որ այդ տողերը տեղ են գտել «Երկրանդիտն» էջերում:

— Երուսաղէմի հաշուէքննիչ յանձնաժողովի անդամներին մի քանիսը հրաժարական մատուցած լինելով, ժողովը անընդունելի դատեց նրանց հրաժարականը և որոշեց դրել երուսա-

ղէմի նախորդ ելեմտից տեսուչ տ. Ղևոնդ վարդապետ Մաքսուտեանին, որպէս զի մատուցանի թէ վանական մատակարարութեան վերջին երկու տարուայ հաշուեցուցակները և թէ կալուածական շինուածքները, գնումները և վաճառումները հաշիւները:

Բիւզանդիոնում կարգում ենք. —

Ս. Էջմիածնի միաբաններից տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեան, որ Թաւրիզ կը գտնուի, նամակով խնդրել է ո. Պատրիարքից, որ Մարտիրոյ հոգևոր հովուութեան պաշտօնն իրեն յանձնուի: Մեսրոպ վարդապետ վերջերս Ղարաբաղ գաւառի առաջնորդական փոխանորդութիւնը կը վարէր:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱԽՈՍԼԱԻ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԸՅ

Церк. Вѣстникъ-ում կարգում ենք.

Պետութեան մէջ խղճի կատարեալ ազատութիւն յայտարարելուց յետոյ պրաւօսլաւ հովուապետներն ու հովիւները գործ կ'ունենան իրենց հօտի վրայ այնպիսի ազդեցութեանց հետ, որպիսիք ց'այսօր նախատեսնել անգամ չէր կարելի: Տաւրիկեան նախկին եպիսկոպոս Նիկողոսը սուրբ Սաշ եկեղեցում քարոզից յետոյ ասել է հետեւեալը. —

Մի քանի շաբաթ սրանից առաջ Տաւրիկեան թերակղզու ընակիչները մէջ յայտնուեց Ամերիկայից եկած պրեսօփետերեան քարոզիչ Պետեր Եաստէր, որ Ամերիկայից գնում էր Պարսկաստան: Նա եկաւ Աւետարան քարոզելու և արդէն եղել էր Մելիտոպօլում, Աստրախանում և Նոյն իսկ Սիմֆէրոպօլում: Նա եկաւ և ինձ մօտ Խերսոնէս՝ ինձանից օրհնութիւն ստանալու այդ գործի համար: Երբ ես զարմացած հարցրի, թէ նա ի՞նչպէս պէտք է Աւետարան քարոզի պրաւօսլաւ քրիստոնեաներին, որոնց հազար տարի առաջ են Աւետարան քարոզել և այն էլ այստեղ՝ համարեա մկրտութեան աւազանին մօտ, նա բոլորովին